ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) միջազգային համագործակցության և քաղաքականության մշակման վարչության քաղաքականության մշակման և մեթոդաբանության բաժնի՝ Վիեննայի միասնական ինստիտուտի կողմից «Կառուցվածքային բարեփոխումներ» թեմայով կազմակերպված դասընթացին մասնակցելու նպատակով Ավստրիայի Հանրապետության քաղաք Վիեննա գործուղման արդյունքների վերաբերյալ

1. Մասնակիցների անուն, ազգանուն և զբաղեցրած պաշտոն.

Մարուսյա Միրզոյան – Հանձնաժողովի միջազգային համագործակցության և քաղաքականության մշակման վարչության քաղաքականության մշակման և մեթոդաբանության բաժնի գլխավոր մասնագետ

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Ավստրիայի Հանրապետություն, քաղաք Վիեննա, 2024 թվականի մարտի 11-ից 22-ը ներառյալ:

3. Գործուղման հիմքը.

Վիեննայի միասնական ինստիտուտի կողմից ստացված հրավեր՝ «Կառուցվածքային բարեփոխումներ» թեմայով դասընթացին մասնակցելու համար:

4. Գործուղման նպատակը.

Վիեննայի միասնական ինստիտուտի կողմից կազմակերպված դասընթացին մասնակցություն, ինչպես նաև համապատասխան մասնագետների հետ փորձի փոխանակում:

5. Գործուղման արդյունքները.

Դասընթացների շրջանակներում քննարկվել են կառուցվածքային բարեփոխումների և մրցունակության սահմանման հիմնահարցերը, բարեփոխումների բացերն ու առաջնահերթությունները, ինչպես նաև այն ցուցանիշները, որոնց միջոցով չափվում են կառուցվածքային բարեփոխումները: Միաժամանակ, քննարկվել են համաշխարհային արժեշղթայի ցանցում ինտեգրման քաղաքականության, աշխատաշուկայի քաղաքականության և բարեփոխումների, կլիմայի ազդեցության և քաղաքականության հարկաբյուջետային ազդեցությունների հիմնահարցերը և այլն: Զեկուցումները հիմնված են եղել համաշխարհային տնտեսության մեջ ընթացող քաղաքական և ակադեմիական քննարկումների և տարբեր երկրներում իրականացված բարեփոխումների գործընթացների

և փորձի ուսումնասիրության վրա: Դասընթացների ընթացքում ուսումնասիրվել են կառուցվածքային բարեփոխումների իրականացման համար կանխատեսումների իրականացման մեթոդները և միջազգային փորձը: Ներկայացվել է կառավարության՝ սեփական կանխատեսումների և ենթադրությունների թափանցիկության ու վստահելիության բարելավման վրա անկախ մարմինների գործունեության ազդեցությունը:

Դասընթացը հիմնված է եղել դասախոսությունների, ակտիվ քննարկումների, ինչպես նաև խմբային աշխատանքների վրա, որոնց ընթացքում դասընթացի շրջանակներում քննարկված հարցերը դիտարկվել են գործնական օրինակների վրա:

6. Առաջարկություններ և գործուղման արդյունքում ձեռք բերված պայմանավորվածություններ

Դասընթացի շրջանակներում մասնակիցները ծանոթացել են կառուցվածքային բարեփոխումների իրականացման ժամանակակից արդյունավետ փորձին, որը հնարավորության դեպքում կարելի է կիրառել Հանձնաժողովի գործունեության քաղաքականության մշակման գործընթացում:

Միջազգային համագործակցության և քաղաքականության մշակման վարչության քաղաքականության մշակման և մեթոդաբանության բաժնի գլխավոր մասնագետ Մարուսյա Միրզոյան